Ինչպե՞ս նախապատրաստվեմ նահանգային ունկնդրության

Օմբուդսմանը կօգնի Ձեզ դիմել նահանգային ունկնդրություն ստանալու համար և նախապատրաստվել դրան: Հետևյալ տեղեկությունները կօգնեն Ձեզ ինչպես հարկն է ներկայացնել Ձեր գործը.

1. Գրեք Ձեր գործի մանրամասները պարունակող հայտարարություն:
2. Ձեզ հետ բերեք Ձեր գործը պաշտպանող կամ հիմնավորող բոլոր փաստաթղթերի պատճենները, օրինակ՝ հայտարարությունները և ծանուցումները:
3. Պատրաստեք այն վկաների և անձանց ցուցակը, ովքեր կցանկանան ունկնդրության ժամանակ խոսել ի պաշտպանություն Ձեզ:

Ունկնդրությունը տեղի կունենա նահանգային ունկնդրությունների գրասենյակի կողմից Ձեր հայցը ստանալուց հետո 45 օրվա ընթացքում: Ձեզ տեղյակ կպահվի ունկնդրության օրվա, ժամի և տեղի մասին: Եթե Դուք անկարող եք ներկայանալ, խնդրեք փոխել ունկնդրության օրը կամ հեռախոսով անցկացնել այն:

Անհրաժեշտության դեպքում՝ Դուք կարող եք օգտվել թարգմանչի և հաշմանդամ անձանց օժանդակության անվճար ծառայություններից:

Բողոքների կարգավորման և նահանգային ունկնդրության ժամկետները

Դուք պետք է բողոքը ներկայացնեք երեխաների օգնության Ձեր տեղական գործակալությանը 90 օրվա ընթացքում՝ այն բանից հետո, երբ իմացել եք, կամ պետք է իմացած լինեիք Ձեր բողոքի առարկայի մասին:

Դուք պետք է նահանգային ունկնդրություն պահանջեք Ձեր բողոքի վերաբերյալ LCSA-ի գրավոր պատասխանը ստանալուց հետո 90 օրվա ընթացքում:

Եթե LCSA-ն գրավոր պատասխան չտա Ձեր բողոքին, ապա Դուք պետք է նահանգային ունկնդրություն պահանջեք LCSA-ին բողոք ներկայացնելու օրվանից հետո 90 օրվա ընթացքում:

Նահանգային ունկնդրությունը տեղի կունենա նահանգային ունկնդրությունների գրասենյակի կողմից Ձեր հայցը ստանալուց հետո 45 օրվա ընթացքում:

Առնոլդ Շվարցնեգեր, *նահանգապետ*
Կալիֆոռնիայի նահանգ

Քիմբըրլի Բելշե, *քարտուղար*
Կալիֆոռնիայի առողջապահության և հանրային ծառայությունների գործակալություն

Գրետա Ուալաս, *տնօրեն*
Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտ

1-866-249-0773 (անվճար)
TTY 1-866-223-9529 (անվճար)
www.childsup.ca.gov

PUB 253 Armenian (7/06)

Օգնում է Կալիֆոռնիայի երեխաներին

Ինչպե՞ս լուծել Ձեր երեխաների օգնության գործի վերաբերյալ ծագած խնդիրները

Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտ

Բողոքների կարգավորման ծրագիրը

Եթե Դուք գոհ չեք երեխաների օգնության Ձեր տեղական գործակալության (LCSA) կողմից տրամադրվող օգնությունից, Դուք իրավունք ունեք բողոք ներկայացնելու «Բողոքների կարգավորման ծրագրով»:

Երեխային խնամող կողմը կամ չխնամող ծնողը կարող է բողոք ներկայացնել, եթե Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտում բացված գործ ունի:

«Բողոքների կարգավորման ծրագրով» **կարող են** լուծում գտնել հետևյալ հարցերի վերաբերյալ ներկայացված բողոքները.

- գործ բացելու կամ փակելու վերաբերյալ որոշումները.
- երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի կողմից որոշում չկայացնելու դեպքերը.
- վճարումների գանձումը և բաշխումը.
- նախկինում չվճարված պարտքերի գանձումը.
- երեխայի ապրուստադրամի չափը փոխելու փորձերը.
- ծառայությունը ժամանակին ստանալու հարցերը.
- որոշումների կիրարկումը:

«Բողոքների կարգավորման ծրագրով» **չեն կարող** լուծում գտնել հետևյալ հարցերի վերաբերյալ ներկայացված բողոքները.

- դատարանի կողմից սահմանված՝ երեխայի ապրուստադրամի կամ նախկինում չվճարված պարտքի չափը, խնամակալության, երեխային այցելելու թույլտվության կամ ամուսնական օժանդակության, ինչպես նաև ծնողությունը հաստատելու վերաբերյալ հարցերը.
- բողոքները դատարանի գործողությունների նկատմամբ. այս հարցում օգնություն ստանալու համար դիմեք դատարանի ընտանեկան օրենքի խորհրդատուին, փաստաբանի կամ իրավաբանի.
- քաղաքացիական իրավունքների խախտումները.
- ծառայությունները, եթե հայցվորը երեխաների օգնության բաց գործ չունի:

Ինչպե՞ս բողոք ներկայացնել

Դուք կարող եք բողոք ներկայացնել հեռախոսով կամ անձամբ, ինչպես նաև լրացնելով «Բողոքի կարգավորման հայց» թերթիկը, որը կարող եք ստանալ Ձեր LCSA-ից կամ տպել Կալիֆոռնիայի Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի կայքէջից՝ այցելելով *www.childsup.ca.gov* հասցեն: Բողոքարկման թերթիկը փոստով ուղարկեք կամ անձամբ տարեք LCSA:

Դուք պետք է բողոքը ներկայացնեք LCSA-ին 90 օրվա ընթացքում՝ այն բանից հետո, երբ իմացել եք, կամ պետք է իմացած լինեիք Ձեր բողոքի առարկայի մասին:

Խոսեք Օմբուդսմանի հետ

Եթե Դուք որևէ խնդրի հարցում օգնության կարիք ունեք, խոսեք LCSA-ի օմբուդսմանի (Ombudsperson) հետ: Նա պարտավոր է՝

- օգնել Ձեզ երեխաների օգնության ծառայություններ ստանալու հարցում.
- բացատրել Ձեզ Ձեր իրավունքները և պարտականությունները.
- օգնել Ձեզ լուծել Ձեր գործի վերաբերյալ ծագած խնդիրները.
- բացատրել Ձեզ բողոքարկման ընթացակարգը՝ բողոքարկում ներկայացնելուց առաջ և հետո և դրա ընթացքում.
- օգնել Ձեզ նահանգային ունկնդրություն պահանջելու և դրան նախապատրաստվելու հարցում, եթե Դուք բավարարված չեք այն բանով, թե ինչ կերպ է լուծվել Ձեր բողոքարկման հարցը:

Ի՞նչ կարվի, երբ ես բողոք ներկայացնեմ

Բողոքարկվող գործի վրա աշխատող անձից տարբեր որևէ այլ անձ կուսումնասիրի և կփորձի լուծում գտնել Ձեր բողոքին, ապա կհայտնի LCSA-ին, թե ինչ պետք է արվի, հարցը կարգավորելու համար: Ձեր բողոքը ստանալուց ոչ շատ անց բողոքն ուսումնասիրող աշխատակիցը կապ կհաստատի Ձեզ հետ:

LCSA-ն պարտավոր է յուրաքանչյուր բողոքի կարգավորման վերաբերյալ գրավոր կերպով պատասխան տալ 30 օրվա ընթացքում: Եթե անհրաժեշտ լինի, LCSA-ն կարող է երկարաձգել բողոքի կարգավորման ժամկետը ևս առավելագույնը 30 օրով: Բողոքի կարգավորման ժամկետը երկարաձգելու դեպքում LCSA-ն պարտավոր է Ձեզ նամակ ուղարկել, նշելով դրա պատճառը:

LCSA-ն Ձեզ գրավոր «Բողոքի կարգավորման մասին ծանուցում» կուղարկի, որում նշված կլինի, որ Դուք նահանգային ունկնդրություն պահանջելու իրավունք ունեք, եթե բավարարված չեք այն բանով, թե ինչ կերպ է լուծվել Ձեր բողոքարկման հարցը:

Նահանգային ունկնդրության ծրագիրը

Եթե LCSA-ի կողմից Ձեր բողոքի վերաբերյալ ստացած պատասխանը Ձեզ չբավարարի, Դուք իրավունք ունեք Ձեր խնդրի վերաբերյալ նահանգային ունկնդրություն պահանջելու:

Նահանգային ունկնդրությունը **չի կարող** լսել հետևյալ հարցերի վերաբերյալ ծագած վեճերը.

- այն հարցերի վերաբերյալ, որոնք պետք է դատարանում լսվեն.
- դատարանի կողմից ընդունված երեխայի ապրուստադրամի չափի վերաբերյալ.
- ծնողական հարաբերության/հայրության վերաբերյալ.
- երեխայի խնամակալության կամ երեխային այցելելու թույլտվության վերաբերյալ.
- վիրավորանք հասցնելու վերաբերյալ.
- քաղաքացիական իրավունքների խախտումների վերաբերյալ.
- LCSA-ի աշխատակցի կողմից անհարգալից վերաբերմունքի արժանանալու վերաբերյալ:

Ինչպե՞ս նահանգային ունկնդրություն պահանջեմ

Խոսեք Օմբուդսմանի հետ կամ դիմումի ձև ստացեք՝

- երեխաների օգնության Ձեր տեղական գործակալությունից.
- Կալիֆոռնիայի Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի էջակայքից, հասցե՝ *www.childsup.ca.gov*.
- նահանգային ունկնդրության գրասենյակից. զանգահարեք (866) 289-4714 անվճար հեռախոսահամարով կամ
- գրեք Կալիֆոռնիայի Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի նահանգային ունկնդրության գրասենյակ՝ California Department of Social Services, State Hearing Office, 744 P Street MS 19-98, Sacramento, CA 95814 հասցեով: